<<Էդիթ պրինտ>> հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը և կերպարվեստի մեթոդիկային ներկայացվող պահանջները:

Հաստատություն՝ - Երևան, Նորք- Մարաշ, հ. 123 մանկապարտեզ /ՀՈԱԿ/

Դաստիարակ՝ Հասմիկ Էտիբարյան

Ղեկավար՝ Ավետիսյան Ժաննա

Երևան 2022

Անհրաժեշտ գրականության ցանկ

1.Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր

2. Կերպարվեստային պարապմունքների կազմակերպումը մանկապարտեզի միջին խմբում:

L. Սմբատյան, L. Սարգսյան

3.Ծննդից մինչև վեց տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչներ , ՄԱԿ-ի հիմնադրամ <<Փրինթ ինֆո>> 2011

4.Նկարչությունը մանկապարտեզում Ջ. Ղամբարյան, մեթոդական օգնություն դաստիարակողին 1999թ.

5.<<Նախաշավիղ>> ամսագրեր

6. Էլեկրոնային կայքեր

Բովանդկություն

1. Ներածական մաս

2.Բուն տեքստ, մաս 1

3. Բուն տեքստ, մաս 2

4.Եզրակացություն

Ներածություն

Քանի որ նախադպրոցական տարիքը անձի զարգացման կարևորագույն շրջանն է, ուստի գեղագիտական որակների հիմքերը դրվում են հենց վաղ տարքում և դրանք կազմավորվում և պահպանվում են ամբողջ կյանքի ընթացքում: Գեղեցիկ միջավայրը երեխայի գեղագիտական դաստիարակության հիմնական պայմանն ու միջոցն է: Այն նպաստում է նախադպրոցականի զգայական փորձի հարստացմանը: Գեղագիտական դաստիարակության ուղղված պարապմունքները նպաստում են երեխայի մտածողության երևակայության , կազմակերպվածության , կարգապահության զարգացմանը, հարստացնում նրա հուզազգացմունքային փորձը: Հետևաբար նախադպրոցական հաստատություններում իրականցվող գեղագիտական դաստիարակությունն ապահովվում է յուրահատուկ կապ կյանքի և արվեստի միջև:

Միաժամանակ այն զարգացնում է երեխաների՝ իրականությունը հուզականորեն ընկալելու, գեղեցիկը նկատելու և արտահայտելու ընդունակությունները: Այս նպատակների իրականացմանն է ուղղված նաև կերպարվեստի պարապմունքները և այս հոդվածում կմանրամասնեմ կերպարվեստին ներկայավցող պահանջներն ու նպատակները, նաև կներկայացնեմ ավանդական և ոչ ավանդական նկարչության նմուշ-օրինակներ:

Բուն տեքստ - Մաս 1

Մեծահասակներն ընդհանուր առմամբ մեծ դեր և ազդեցություն ունեն երեխայի աճի և զարգացման վրա, իսկ ծնողները կամ նրանց օրիանական ներկայացուցիչները միանշանակորեն իրենց երեխաների առաջին և ամենակարևոր դաստրարակներն են:

Դաստիարակները և ընտանիքները պետք է տարբեր խաղերի միջոցով խթանեն երեխայի համակողմանի զարգացումը, գիտելիքներ հաղորդեն նրանց շրջապատող աշխարհի մասին և աջակցեն, որ երեխայի մոտ զարգանան ամբողջ կյանքի ընթացքում սովորելու ցանկությունն ու հմտությունները: Մեծահասակները պետք է իմանան, որ երեխայի զարգացումը տեղի է ունենում հաջորդական փուլերով և կախված է նրա ունեցած փորձառություններից , ընտանեկան մշակույթից և անհատականությունից:

Վաղ մանկությունը երեխայի աճի, զարգացման և սովորելու բացառիկ ժամանակաշրջանն է, ուստի կարևոր է նկատի ունենալ, որ որոշ երեխաներ կարող են չափորոշիչներով սահմանված ակնկալիքներից շատ ավելի բարձր ցուցանիշներ ունենալ,մինչդեռ որոշ երեխաներ էլ հնարավոր է որ ամբողջապես չտիրապետեն այս փաստաթղթում նշված գիտելիքներին և հմտություններին:

Այս իմաստով շատ կարևոր է, որ երեխաների տվյալ տարիքին համապատասխան զարգացման և ուսումնառության հետ կապված ակնկալիքների մասին մտածելիս մենք ուշադրություն դարձնենք նաև նրանց անհատական առանձնահատկություններին:

Երեխաները տարբեր են լինում կախված իրենց բնածին հատկություններից, ունեցած փորձից, ունակություններից, առողջական վիճակից, և սովորելու նկատմամբ ունեցած վերաբերմունքից: Հետևաբար, նրանց զարգացումը տարբեր տեմպերով է ընթանում, և պետք է ընդունել, որ երեխաների միջև այդպիսի տարբերությունները բնական են: Բոլոր երեխաների նկատմամբ անհրաժեշտ է դրսևորել հարգանք և նրանց վերաբերվել որպես ունակ անհատների, որոնք կարող են սովորել, հասկանալ իրենց շրջապատող աշխարհը, ընտրություն կատարել և արտահայտել սեփական կարծիքը:

Չափորոշիչը նպատակաուղղված է նախադպրոցական տարիքի երեխայի իմացական շարժառիթների խթանմանը, նրա ինքնաճանաչման, ինքնադրսևորման, համակողմանի և

նեևդաշնակ զարգացման ապահովմանը, առողջ կենսակերպի հիմքերի ձևավորմանն ու սոցիալականացմանը:

Չափորոշիչը նաև կրթական հիմնական ծրագրերի, նպատակների իրագործումը ցույց տվող չափանիշների կատարման ընդհանուր մակարդակն է, երեխայակենտրոն կրթության հիմքը, որը հնարավորություն է ընձեռում ևևձագանքելու երեխայի կարիքներին և հետաքրքրություններին՝ հարգելու երեխաների անձը, հենվելու երեխաների ուժեղ կողմերի վրա և խթանելու համատեղ ուսումնառություն:

Չափորոշիչը որոշակի է, հասանելի, իրատեսական, համապարփակ և ժամկետային: Այն մշակվում է «Կրթության մասին» ՀՀ օրենսդրության հանրակրթության պետական կրթակարգի, վաղ մանկության զարգացման հայեցակարգի և ռազմավարության պահանջներին համապատասխան:

Չափորոշչի հասկացությունն ու էությունն այն է, որ այն կանոնակարգող փաստաթուղթ է, որը սահմանում է կրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, երեխաների ուսումնական ծանրաբեռնվածության առավելագույն ծավալը և երեխաներին ներկայացվող որակական պահանջները:

Չափորոշչին համապատասխան մշակվում են կրթական ծրագրերը կանոնակարգող ակտերի նախագծեր, ուղեցույցներ, երաշխավորություններ, հաղորդաշարեր: Չափորոշչի հիման վրա կատարվում են դիտարկումներ և այլն: Այսինքն, չափորոշիչը համարվում է հայեցակարգերի, ծրագրերի, մեթոդական ուղեցույցների մշակման, դրանց գործնականում ներդրման և երեխայակենտրոն զարգացման հիմք:

Չափորոշչի ձևավորման հիմնական սկզբունքներն են՝ երեխաների զարգացման և անհատական առանձնահատկությունների հաշվառումը , խաղի գերակայունությունը,և խաղային գործունեության , կրթական աշխատանքների անհատականացումը և պլանավորումը, մտքի և խոսքի ազատ դրսևորումը, ծնողների ներգրավումը մանկապարտեզի առօրյայում երեխաների սահուն տարրական դպրոցի անցման կազմակերպումն ու իրականացումը, ստեղծագործական ունակությունների զարգացումը, մասնավոր մեթոդիկաների տիրապետումը, զարգացնող առարկայական և ֆիզիկական միջավայրի ապահովումը:

Չափորոշիչով սահմանված կրթության բովանդակության հասանելիություն ապահովում է զարգացման հիմնական ուղղություններին համապատասխան հետևյալ բաղադրիչներով՝ գիտելիք, կարողություն, հմտություն, արժեքային համակարգ:

Նախադպրոցական կրթության պետական կրթական զարգացման և միջավայրային չափորոշիչները կազմում են վաղ մանկության զարգացման ընդհանուր չափորոշիչ բաղադրամասեր և սահմանում նախադպրոցական երեխաների կրթական ծրագրերի բովանդակության նախագծման հիմնական ուղղությունները: Չափորոշչում նախադպրոցական կրթության բովանդակությունը նորկայացվում է պայմանականորեն տարանջատված կրթադաստիարակչական ոլորտը, տիրույթների և բաղադրիչների միջոցով: Մինչև վեց տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչների հիմքում ընկած է այն, համոզմունքը, որ երեխաների ուսումնառությունը և զարգացումը բազմակողմանի է, քանի որ ֆիզիկական զարգացմանը զուգընթաց զարգանում է երեխայի խոսքը և լեզուն, զգացմունքները, սոցիալական շփման և իմացական կարողությունները: Հետևաբար բոլոր ոլորտները կարևոր են առողջ զարգացման համար և պետք է հավասարապես արժևորվեն: Երեխաները ակտիվ սովորողներ են և նրանք ուզում են հասկանալ այն աշխարհը, որտեղ ապրում են: Նրանք իրենց գիտելիքները և արժեքները կառուցում են հասակակիցների, ծնողների և այլ մեծահասակների հետ փոխհարաբերությունների , ինչպես նաև ֆիզիկական և հասարակական միջավայրի ակտիվ ուսումնասիրությունների միջոցով :

Երեխայի առողջ ներդաշնակ և համակողմանի զարգացման համար անհրաժեշտ է աշխատանքներ տանել նաև ֆիզիկական, իմացական, հուզական և սոցիալական ոլորտների հավասարաչափ զարգացման ուղղությամբ:

Չափորոշիչները դասակարգված են ըստ զարգացման հետևյալ ոլորտների:

-Շարժողական ոլորտը:
-Խոսքի և հաղորդակցության ոլորտը
-Իմացական ոլորտը
-Հուզական, սոցիալ-անձնային ոլորտ
-Ինքնասպասարկման, անվտանգության, առողջ ապրելակերպի ոլորտը:

Չափորոշչի ներդրումը պարտադիր է նախադպրոցական ուսումնական հաստատությունների համար: Դրանք կարող են տարբեր կիրառություններ ունենալ՝ մասնավորապես

-Բարելավել ուսուցումըի

-Բարելավել ծնողավարության հմտությունները և վարքը

-Բարելավել մանկավարժների մասնագիտական պատրաստվածությունը

-Գնահատել ն/դպ ծրագրերի արդյունավետությունը

-Բարձրացնել հանրության գիտակցությունը վաղ մանկության շրջանի կարևորության վերաբերյալ:

Մի խոսքով չափորոշիչները դաստիարակների /մանկավարժների/ համար ստեղծում են այն հիմքը, որի վրա նրանք կարող են պլանավորել ուսուցումը: Ճիշտ է, չափորորոշչային փաստաթուղթը ուսումնական ծրագիր չէ , սակայն այն ներկայացնում այն ոլորտները, որոնց վրա մանկավարժները պետք է հիմնվեն երեխաների ուսուցումը պլանավորելիս: Չափորոշիչները կարող են լինել նաև գործիք միջոց, այն ծնողների համար, որոնք հաճախ անհանգստանում են, թե արդյոք իրենց երեխաները «Ճիշտ» գիտելիքներ և հմտություններ են ստանում՝ հետագայում դպրոց գնալու համար: Չափորոշիչների օգնությամբ ծնողները կտեսնեն, որ առօրյա գործողությունների միջոցով երեխաներին կարելի է սովորեցնել, այն, ինչ նրանք պետք է իմանան հետագայում հաջողության հասնելու համար:

Միևնույն ժամանակ կարևոր է ընդգծել , որ չափորոշիչները նախատեսված չեն .

-որոշելու, թե երեխան արդկոք պատրաստ է մանկապարտեզ կամ դպրոց գնալու, թե ոչ:

-մի երեխային մյուսի հետ համեմատելու,

-Որպես ուսումնական ծրագիր օգտագործելու /չնայած որ դաստիարակները կարող են այս նյութերն օգտագործել ուսումնական պարապմունքները պլանավորելու համար/:

Չկա իրար նման երկու երեխա: Երեխաների սեփական փորձը վերաբերմունքը, հմտությունները և սովորելու ոճը ազդում են նրանց ուսուսումնառության վրա: Չափորոշչային վերոնշյալ սկզբունքներից բխում է, որ բարձրորակ նախադպրոցական կրթության ապահովման համար կարևորվում են երեխան, ընտան իքը, մանկավարժը, ուսումնական ծրագրերը և կրթության կազմակերպման միջավայրը:

Բուն տեքստ - Մաս 2.

Նախադպրոցական ուսումնական հաստատություններում պարապմունքները եղել են հիմնականում և այսօր էլ մնում են որպես գերիշխող ձև:

Պարապմունքների ձևով իրականացվող ուսուցման ընթացքում երեխաները տիրապետում են որոշակի գիտելիքների և կարողությունների , որոնք չեն կարող յուրացվել խաղերի, մեծերի հետ հաղորդակցման և ինքնուրույն գործունեության ընթացքում: Ուսուցումը պետք է կատառել ամենից շատ խաղային բնույթով և խաղի մեջ: Այս պահանջը վերաբերվում է նաև կերպարվեստի մեթոդիկային : Կերպարվեստը նախադպրոցական տարիքի երեխաների գեղարվեստական դաստիարակության կարևորագույն միջոցներից մեկն է: Եվ կերպարվեստի պարապմունքների բովանդակությունը և կառուցվածքը մշակելի դաստիարակը պետք է հավատարիմ մնա ստեղծագործաբար աշխատելու սկզբունքին: Կարևոր է նաև մեթոդիկայի ճիշտ կիրառումը: Չի կարելի մոռանալ, որ փոխվում են մեթոդները, իս կեթոդիկան գիտություն է, որը պետք է միշտ չիշտ իրականացնել՝ անկած այն բանից, թե ինչ մեթոդներ են կիրառվում՝ ավանդական խաղային, թե փոխներգործություն: Անհրաժեշտ է միշտ հիշել, որ կերպարվեստի ծրագրային խնդիրների հաջող լուծումը պայմանավորված է ամենից առաջ այն մթնոլորտով և զարգացնող միջավայրով, որոնք ստեղծում է դաստիարակը հաշվի առնելով իր խմբի երեխաների անհատական հոգեբանական առանձնահատկություններն ու կարծիքները: Քանի որ ես աշխատում եմ ավագ խմբի հետ, ուստի այս խմբի տարիքային առանձնահատկությունը հնարավորություն է տալիս արդյունավետ կազմակերպել կերպարվեստային գործունեության ցանկացած տեսակ: Այս տաիքային խմբի երեխաները կարող են հեշտությամբ և ակտիվորեն շփվել,

հաղորդակցվել, ներգրավվել խաղի մեջ, հրապուրվել հորինված կերպարներով, տեսնել կենցաղում, բնության մեջ հանդիպող արվեստում վերարտադրված առարկաների գեղարվեստական արտահայտչականությունը դրանց բնորոշ հատկությունները. Ձևը, ուրվագիծը, գույները, նախշերը: Այս խմբի երեխաների հատուկ է մեծ ոգևորությամբ զննել , ուսումնասիրել նմուշը, որն առաջարկվում է նկարել:

Կերպարվեստային գործունեության նպատակն է

- Երեխաների մեջ զարգացնել գեղագիտական ընկալման, գեղագիտական ճաշակի, իրական երևույթների ու առարկաների նկատմամբ հուզազգայական վերաբերմունք:
- Զարգացնել նրանց գեղարվեստաստեղծագործական ունակությունները:

Կերպարվեստային գործունեության խնդիրներն են

- Ընդլայնել երեխաների պատկերացումները ինչպես հայ, այնպես էլ համաշխարհային արվեստի ստեղծագործությունների վերաբերյալ, զարգացնել հետաքրքրասիրություն գեղանկարի, նատյուրմորտի նկատմամբ՝ որպես երեխաների գեղարվեստական ստեղծագործական աշխատանքի սկիզբ:
- Շարունակել զարգացնել գեղագիտական զգացողությունը, երևակայությունը, գեղարվեստագեղագիտական ունակությունները, առարկաները դիտելու և հոտազոտելու կարեղությունները, այդ թվում նաև ձևավորել կերպարային պատկերացումներ ՝ շոշափելու օգնությամբ:
- Շարունակել զարգացնել հետաքրքրություն կերպարվեստային գործունեության տեսակների նկատմամբ տարբեր արտահայտչամիջոցներով միևնույն ձևը կամ կերպարը վերարտադրելու ունակությունները:
- Ընդլայնել և զարգացնել պատկերացումները կենցաղի , տրանսպորտի, մրգերի, բանջարեղենների, ծաղիկների, ծառերի, կենդանիների, բ նության, երևույթների, ինչպես նաև տոների ու նշանակալից իրադարձությունների վերաբերյալ:
- Երեխաների աչալրջությունը հրավիրել տարբեր առարկաներին բնորոշ հատկությունների, դրանց ձևերի, ուրվագծի, առանձին մասերի, գույների նախշերի և գեղաևվեստական արտահայտչականության վրա:

- Սովորեցնոլ տարբեր նյութերով բազմամաս կոմպոզիցիա ստանալու ձևերն ու եղանակները:
- Օգնել երեխաներին ընտրելու թեմաներ խմբային աշխատանքների համար: Սովորեցնել ինքնուրույն գտնել պարզ թեմաներ շրջակա միջավայրից, գեղարվեստական գրքերից:
- Երեխաների համար ստեղծել ազատ, անկաշկանդ միջավայր ինքնուրույն աշխատելու, ստեղծագործելու, գեղարվեստական գործունեությամբ զբաղվելու համար:

Հինգ - վեց տարեկան երեխաների կերպարվեստային գործունեության ծրագրի հիմանական խնդիրներն են `

- Զարգացնել հինգ-վեց տարեկան երեխաների գեղարվեստաստեղծագործական ունակությունները:
- Երեխաների մեջ ամրապնդել և կատարելագործել կերպարվեստային գործունեության այբուբենը՝ գծանկարի, գունանկարի, ծեթակերտման, ապլիկացիայ, դեկորատիվ կիրառական աշխատանքի հիմունքներ:
- Նկարչության ուսուցում, բնօրինակից հիշողությամբ և երևակայությամբ: Դրա հիման վրա երեխաների տեսողական հիշողության տարրական պատկերացումների ստեղծագործական երևակայության զարգացումը:
- Երեխաների գեղագիտական ընկալման, գեղագիտական ճաշակի, իրականության երևույթների և առարկաների նկատմամբ հուզական զգայական վերաբերմունքի զարգացումը և կատարելագործումը:
- Երեխաների մեջ կերպարվեստի նկատմամբ սիրո և հետաքրքրության ձևավորումը:
- Նպաստել երեխաների անհատականության ձևավորմանը:
- Սովորեցնել երեխաներին վերլուծել դաստիարակի կողմից կառուցած շինությունների նմուշները, առանձնացնել հիմնական մասերը, սահմանել այդ մասերի տարածական տեղադրությունը մեկը մյուսի հարաբերությամբ, շինության յուրաքանչյուր մասից առանձնացնել առանձին մասնիկներ: Կարողանալ պլանավորել շինության ստեղծման հիմնական փուլերը: Կարողանալ շինության

կառուցման ընթացքում ձևափոխել դետալների օգտագործումը, մեկ դետալը փոխարինել մյուսով՝ չխախտելով հիմնական կոնստրուկցիան: Կառուցել տարբեր շենքեր, կամուրջներ, մեքենա և այլն: Կառուցել ոչ միայն նմուշի հիման վրա, այլև դաստիարակի բառային նկարագրությամբ: Նկարներին լուսանկարների նայելով՝ կառուցել շինություններ:

- Զարգացնել երեխաների մեջ ստեղծագործական ձեռներեցությունը, հնարամտությունը:
- Սովորեցնել ինքնաշեն խաղալիքներ պատրաստելու համար ընտրել բազմազան նյութեր, կառուցել մտածածին համապատասխան: Ինքնաշեն խաղալիքների պատրաստման համար օգտագործել կաղին, խոտ, ծղոտ, սերմեր, կոներ և այլն:

Ավագ խմբում անցկացվում են կերպարվեստի հետևյալ պարապմունքները՝ նկարչություն, ծեփ, ապլիկացիա և կառուցողական աշխատանք:

Նախադպրոցականի համար նկարչությունը այնքան բնական պահանջմունք է, որքան խաղը:

Նկարչությունը ոչ միայն փոքրիկի զգացմունքների արտահայտումն է, այլև միջոց՝ ճանաչելու շրջապատը: Միաժամանակ նկարչությունը կատարում է նաև զարգացնող դեր՝ հարստացնելով և ճշգրտելով երեխաների աշխարհընկալումը:

Քանի որ նկարչությունը ինքնատիպ խաղ է, ուստի պետք է սովորեցնել երեխային նկարել, չպետք է նրան զրկել ինքնուրույնությունից , այլ նպաստել ազատ ու ստեղծագործ աշխարհընկալման ձևավորմանը: Մինչև նկարելը երեխան պետք է խաղա նկարվող առարկայով, ձեռքը վերցնի, շոշափի այն, ըմբռնի դրա ամբողջական բնույթը: Նկարչության բուն գործընթաց է թղթի վրա պատկերելու միջոցով երեխայի սիրո, հակումների, հույզերի ու տրամադրության արտացոլումն է, երեխային ձերբազատում է լարվածությունից և հանգստություն պարգևում: Ավագ խմբում նկարչության բովանդակությունը համեմատաբար բարդանում է՝ գծերի տեսակների , գույնի, ձևի, ռիթմի միջոցով ստանալ ավելի բարդ և լիարժեք պատկերներ թղթի վրա, երեխային մոտեցնել ձևի ճիշտ ընկալմանը և նպաստել ձեռքի վարժ շարժումների զարգացմանը:

Պետք է շարունակել ձևավորել առանձին առարկաներ նկարելու հմտություններ և այդ առարկաների պատկերները կրկնելով ու դրանց ավելացնելով այլ պատկերներ ՝ ստանալ թեմատիկ կոմպոզիցիաներ, երևակայելով պատկերացումները՝ առարկայի ձևի /շրջան,ձվածիր, քառակուսի, եռանկյուն, ուղղանկյուն/, մեծության դիրքի կառուցվածքի վերաբերյալ: Երեխաների ուշադրությունը հրիավիրել առարկաների՝ միմյանց նկատմամբ հարաբերակցությանը, օրինակ ըստ բարձրության /ծառերը բարձր են, թփերը ցածր են և այլն/:

Ամրացնել և ընդլայնել երեխաների պատկերացումները՝ շրջապատող առարկաների ու կառույցների, դրանց գույների, գուներանգների վերաբերյալ: Ամրապնդել պատկերացումները նոր գույների ամրացման վերաբերյալ: Գույների խառնուրդից նոր գույների ու գուներանգների ստացման հնարները: Երեխաները պետք է իմանան նաև հակադիր գույները: Պետք է ստանալ աստիճանական մի քանի բաց գույն պահպանելով մեկ գույնից մյուսի ամրացման տեխնիկան

Նկարել բնօրինակից, մտահղացմամբ և երևակայությամբ, պատկերել պարզ թեմաներ՝ ընդգծելով առարկաների հիմնական հատկանիշները՝ կառուցվածքը՝ գույնը ձևը: Օգնել երեխաներին նկարել թեմային համապատասխան առանց շեղվելու դրա բովանդակությունից:

Կառուցել բազմաձև նախշեր, պատկերներ և կոմպոզիցիաներ՝ երկրաչափական ձևերի գծերի, կետերի հպումների, վրձնահարվածների միջոցով: Ձևավորել նկարելու հմտություններ ՝ զարգացնելով մանր մոտորիկան:

Կիրառել ոչ ավանդական մեթոդներով նկարելու հնարքներ: Ավագ խմբում անհրաժեշտ է շարունակել աշխատանքը հետևյալ խնդիրների իրականացման ուղղությամբ.

- Կարողանալ ճիշտ բռնել մատիտը, վրձինը:
- Վրձնով անել ուղղահայաց, հորիզոնական, ալիքաձև, թեք գծեր, անել վրձնահպումներ:
- Ներկը վերցնել անհրաժեշտ չափով, ավելորդ մասը թողնել պնակի եզրին:
- Ազատ և վստահ թղթի վրա կատարել վրձնահարվածներ:
- Աշխատանքի վերջում վրձինը լվանալ, չորացնել և սրբել չոր լաթով:

- Ճիշտ օգտվել գույներից:
- Բացի հիմնական գույներից /կարմիր, կապույտ, դեղին/ աշխատել նաև այլ գույներով:
- Հավասարաչափ ներկել պահանջվող մակերեսը, ստանալ երանգավորված գունային մակերես:
- Նկարելիս կարողանալ ընդունել աշխատանքային ճիշտ դիրք, աշխատել ինքնուրույն և որոշակչի տեմպով:

Ավագ խմբում իրականացվում են նկարչության հետևյալ տեսակները՝

- Առարկայական
- Դեկորատիվ
- Թեմատիկ
- Ստեղծագործական /մտահղացմամբ/

Առարկայական նկարչության կարևոր առանձնահատկություններից է առարկայի պատկերումը մոտավոր ճշգրտությամբ: Այս նկարչության ուսուցումը հիմնվում է նախնական դիտումների վրա, նպատակն է ՝ երեխաների մեջ ձևավորել ճիշտ պատկերացում առարկայի ձևի, չափի, կառուցվածքի, գույնի և այլ հատկանիշների վերաբերյալ: Այսինքն բնօրինակից նկարելը համարվում է դիտողական ուսուցման ձև, որի ժամանակ երեխայի գիտակցության մեջ մտապահվում են առարկայի ձևը, գույնը և այլն: Բնօրինակից նկարչությունը նկարելու ամենաբարդ տեսակն է: Այն հիմնվում է բավարար զարգացած աչքաչափի վրա: Որպես բնօրինակ օգտագործվող նմուշը պետք է տեղադրվի երեխաներին որքան հնարավոր է մուգ և բնօրինակի վերլուծությունն իրականացվի պարապմունքից առաջ:

Խիստ կարևոր է, որ երեխաներն աշխատելուց հետո կարողանան համեմատել իրենց աշխատանքը բնօրինակի հետ, գտնեն դրական կողմերն ու թերությունները: Գեղագիտական դաստիարակության իրականացման ձևերից մեկը դեկորատիվ նկարչություն է, , որի միջոցով լուծվում են մի շարք խնդիրներ.

- Երեխաները յուրացնում են դեկորատիվ նախշի պատկերման տարբեր եղանակների պարզագույն տարրեր:

- Սովորում են դրանք ճիշտ ձևով տեղադրել թղթի վրա՝ պահպանել ռիթմը հաջորդականությունը, գունային ներդաշնակությունը:
- Հետաքրքրություն է ձևավորվում կիրառական արվեստի նմուշների նկատմամբ:

Անհրաժեշտ է երեխաներին բացատրել, որ նախշը չի սիրում ոչ շատ խտություն, ոչ էլ բաց տարածություն: Հատկպես կարևոր է ռիթմի պահպանումը , ռիթմը նախշի հիմքն է: Երեխաները սովորում են, որ վրձնահպումներով , կետիկներով, շրջանակներով, ուղիղ և ալիքաձև գծով կարելի է պատկերել տարբեր նախշեր: Թեմաիկ նկարչությունը երեխաներին սովորեցնում է նկարել, ոչ թե առարկայի, այլ վրձնի և ներկի օգնությամբ ստեղծոլ սյուժետային թեմա /մի քանի առարկաներ, պատկերներ/: Դրա շնորհիվ երեխաները ձեռք են բերում նոր ունակություններ և հմտություններ՝ կողմնորոշվել թղթի վրա պատկերել մի քանի կերպար և դուրս չգալ թղթի սահմաններից , միաժամանակ օգտվել տարբեր գույներից և այլն:

Բնականաբար այս տարիքում ընտրված թեմաները պետք է լինեն պարզ և անհրաժեշտության դեպքում ունենան նմուշօրինակներ, որոնք սակայն նկարելու ընթացքում չպետք է լինեն երեխաների տեսադաշտում: Նկարչության այս եղանակով աշխատելու ժամանակ երեխաներն աստիճանաբար սովորում են, որ մոտ կանգնած տնակն ու ծառերն ավել մեծ են և բարձր. իսկ հեռվում կանգնածները՝ փոքր: Թմաիկ նկարչության ժամանակ թեմաները պեք է բխեն երեխաների նախկինում ձեռք բերված գիտելիքերից, տեղեկություններից, ծանոթ հեքիաթներից և մուլտֆիլմերից: Նույն նպատակը դրվում է նաև ստեղծագործական նկարչության դեպքում , միայն այս պարագայում ավելանում է նաև երեխայի երևակայությունը, ստեղծագործական միտքը :

Տարեվերջին երեխաները պետք է կարողանան՝

- Ճանաչել, տարբերել, անվանել և նկարել երկրաչափական պատկերներ,
- Ընտրել և օգտագործել տարբեր գույներ՝ կարմիր, դեղին, կանաչ, կապույտ, սև, սպիտակ , շագանակագույն և այլն:
- Հստակ վերարտադրել առարկաներն ու երևույթները՝ օգտվելով ծանոթ արտահայտչամիջոցներից,

- Կոկիկ և խնամքով երանգավորել պատկերվող առարկան, օգտագործել տարբեր նկարչական նյութեր, կրնագծե, եզրագծել, նկարի ուրվագծով:

Կերպարվեստային գործունեության մեջ տարբերակում ենք նաև ավանդական և ոչ ավանդական նկարչությունը: Ոչ ավանդական պարապմունքների ընթացքում երեխան ազատ է նյութերի, միջոցների, ժամանակի և տարածության ընտրության մեջ: Նա կարող է նկարել տարբեր նյութերով, օգտագործել տարբեր արտահայտչամիջոցներ: Ձևերի և միջոցների բազմազանությունը նոր խնդիր է առաջ բերում և ստիպում երեխային հաղթահարելու հանդիպող խոչընդոտները, խթանելով երևակայության և ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

Ոչ ավանդական մեթոդով, նկարչությունը երեխաներին հնարավորություն է տալիս խաղալով ծանոթանալ պարզագույն նյութերի տեսակներին և դրանց հատկություններին: Նա կարող է նկարել տարբեր միջոցներով՝ գունավորված՝ գունավորված մատիյներով, կարտոֆիլով, չմռթված թղթով, փրփրապլաստով, սպունգով, խցանով, տերևով, օճառի պղպջակով , ձվի կեղևով և օգտագործել տարբեր նյութեր՝ լրագիր, ափսե, ծառի տերև, գունավոր կամ սպիտակ թղթեր: Նա ազատ է նյութերի միջոցների, ժամանակի և տարածության մեջ: Երեխան աշխատելով ոչ ավանդական մեթոդներով կարող է ատանալ պատկերներէ հարթ և անհարթ մակերեսների վրա: Ոչ ավանդական մեթոդով նկարչությունը գործունեության այն լավագույն ձևերից է, որը հնարավորություն է տալիս հաղթահարել նկարչության հանդեպ վախը. թե ոչինչ չի ստացվի: Դրա համար կարելի է կիրառել տարբեր ձևեր և միջոցներ, օրինակ նկարել մեծ տղթի վրա , գունավորված մատիկներով , խոնավ ոտքերով քայլել տաք ասֆալտի վրա՝ թողնելով ծուռումուռ հետքեր: Տարբեր միջոցներով ստանալով զվարճալի պատկերներ, երեխան մտածում է, որ իր կատարած աշխատանքն ամենալավն է ու ամենագեղեցիկը: Ավարտելուց հետո նա կարող ե առանձնացնել իր կատարածը մի քանի այլ աշխատանքների մեջ և ներկայացնել առանձնահատուկ շեշտադրումով: Նմանատիպ աշխատանքները կարող են տևել 3-4-ից մինչև 10-12 րոպե: Երեխային հետաքրքրում է ոչ միայն աշխատանքը , այլև վերջնական տեսքը, դաստիարակի խրախուսական խոսքը:

Ստորև ներկայացնում եմ ոչ ավանդական նկարչության պարապմունքի նմուշօրինակ:

Նկարչություն տերևով, տարիքը՝ հինգ և բարձր.

Օգտագործվող նյութեր. ցանկացած գույնի չափի թուղթ կամ ստվարաթուղթ, երեխաներ թվով գուաշ, փոքրիկ ներկամաններ, վրձին սպունգ տերևներ:

Նպատակը. սովորեցնել ստանալ հետաքրքիր գունավոր պատկերներ, տերևի միջոցով: Զարգացնել ձեռքի մանր մոտորիկան, մկանները, պատճառել ուրախություն և հրճվանք:

Ընթացքը. տերևի հակառակ կողմի վրա գուաշով ներկել վրձնով, այնուհետեվ ներկված տերևը զգուշորեն տեղափոխել թղթի վրա հարմար տեղում, վրան դնել երկրորդ թուղթը և ձեռքերով զգույշ սեղմել: Գուաշը տերևի միջոցով տեղափոխվում է թղթի վրա: Հեռացնել տերևը և թղթի մակերեսի վրա ստանալ տերևաձև գունավոր հետաքրքիր նախշ: Ամեն անգամ պետք է օգտագործել նոր տերև: Աշխատանքն ավարտելուց հետո ձեռքերը մաքրել անձեռոցիկով և լվացվել:

Աշխատանքի արդյունքը. վերջում ստանում ենք տարբեր գույնի հետաքրքիր տերևաձև պատկերներ:



Նկարչության պարապմունքների մյուս ձևը ավանդական ջրաներկով վրձինով կամ գունավոր մատիտներով նկարչություն է: Ավագ խմբում հիմնականում աշխատում են ջրաներկով և այժմ կներկայացնեմ այդպիսի պարապմունքի նմուշօրինակ:

Պլան – կոնսպեկտ

Թեման – նապաստակ

Նպատակը – սովորեցնել նկարե նապաստակ: Ձևավորել մի քանի մասերից բաղկացած կենդանի նկարել ու տարբեր արտահայտչամիջոցներով /պատկերման ձևով, երանգներով/ նրան բնորոշ հատկանիշներ հաղորդելու կարողություն: Ամրացնել վրձնով նկարելու և ներկելու կարողությունները: Հետաքրքրություն և սեր դաստիարակել բնության նկատմամբ:

Անհրաժեշտ պարագաներ. նկարչական ալբոմի թղթեր, սպիտակ, սև, մոխրագույն գազարագույն ջրաներկեր, ջրով լի տարաներ, վրձիններ լաթեր:

Նպատակն է ընտանիք պատկերող նկար, խաղալիք նապաստակ:

Պարապմունքի ընթացքը.

Երեխաներին առաջարկե հանելուկ նապաստակի մասին.

-Ոտքերը ծուռ, պոչը՝ կարճ

Աչքերը շեղ երկարականջ և

Արագավազ

/Նապաստակ/

Ցույց տալ խաղալիք նապաստակը, կամ նապաստակների նկարը և երեխաների ուշադրությունը հրավիրել նապաստակի մարմնի ձևին.

- Ինչ ձև ունի նապաստակի իրանը – օվալաձև
- Քանի ոտք ունի – 4 ոտք
- Իննչ ձևի է գլուխը - կլոր
- Ինչպիսի ականջներ ունի – երկար

- Ինչպիսն է պոչիկը – կարճ, կլոր, տափակ
- Ինչ գույնի են լինում նապաստակները – մեխրագույն սպիտակ, սև, սպիտակուսև կամ մաս մաս մոխրագույն

Ապա բացատրել նաաստակ նկարելու գործողությունները.

- Վրձինը թաթախել մոխրագույն ներկի մեջ և նկարել օվալ ուղղահայաց դիրքով /նապաստակի իրանը/
- Օվալաձև իրանի ներքևում նկարել շրջանագիծ / գլուխը/ այնպես, որ օվալի վերևի և շրջանագծի ներքևի եզրագծերը հատվեն /իրար վրայով անցնեն/
- Կլոր գլխի վերևի աջ և ձախ կողմերում նկարել նեղ ու երկար օվալաձև ականջները:
- Իրանի ներքևի մասում նկարել երկարավուն , օվալաձև, աղեղի նման մի քիչ կորություն ունեցող աչքերը դեպի ձախ ուղղված, և կողքերից՝ թաթերը՝ դարձյալ դեպի ձախ ուղղված:
- Իրանի ներքևի աջ մասում , նկարել կարճ փոքր, կլորավուն պոչիկը:
- Վրձինը լվանալ ջրով , թաթախել սև ներկի մեջ և գլխի վրա շրջանագծի մեջ պատկերել աչքերը ՝ վրձնի հպումով երկու կետիկ նկարելով:
- Շրջանի մեջ՝ աչքերից ներքև նկարել քիթիկը՝ շատ փքր սև շրջանիկ և քիթիկից դեպի երկու կողմերը ցցված բեղիկներ /երեքական կարճ բարակ գծեր/:
- Այս ամենից հետո կարելի է ներկել նապաստակին: Խորհուրդ է տրվում պատկերի ձախ կեսը ՝ մարմնի առջևի հատվածը ներկել նույն գույնի ավելի բաց, իսկ աջ կեսը / հետևի մասը/ ավելի մուգ երանգով:

Նապաստակին կողքից կիսաշրջված տեսքով պատկերելու համար խորհուրդ է տրվում աչքերը /կետիկները/ նկարել շրջանի ձախ կեսում , ոտքերը դեպի ձախ ուղղված, այդպիսով հնարավոր է լինում նկարել պոչիկ: Հետո երեխաները սկսում են նկարել: Ընթացքում օգնել դժվարացնողներին, խրախուսել նկարել տարբեր գույների՝ սպիտակ, սև, մոխրագույն և այլն:



Ցանկացողները կարող են իրենց նապաստակների համար նկարել գազարներ:

Վերջում բոլորին նկարները փակցնել գրատախտակին, դիտել և քննարկել: Կարելի է ունկնդրել երգ նապաստակի մասին:

Կանաչ-կանաչ բացատում

Վազվզում եմ, թռչկոտում,

Ուտում գազար ու տերև,

Կրծում արմատներ:

Եզրակացություն

Այսպիսով, հետազոտական աշխատանքն այս թեմայով ավարտելով, ակնկալում եմ ծնողների, ընտանիքների ներգրավվածությունը , կրթական չափորոշչային պահանջների իրազկվածությանը և կիրառմանը:

Քանի որ այդ չափորոշիչները մշակվել են առաջնորդվելով երեխայի զարգացման վերաբերյալ կառուցողական սկզբունքներով : Ըստ այդ սկզբունքների երեխաները լավ են զարգանում այն միջավայրում, որտեղ բավարարվում են նրանց ֆիզիկական, մտավոր և հոգեբանական կարիքները, որտեղ նրանք պաշտպանված են զգում, արժևորվում են որպես անհատներ և ակտիվորեն ներգրավվում են նոր հմտություններ և գիտելիքներ ձեռք բերելու նպատակով կազմակերպված բազմաբնույթ աշխատանքներում:

Հուսով եմ, որ այս փաստաթղթի կիրառումը կնպաստի մեր երեխաների համար նախատեսված ծառայությունների որակի բարձրացմանը, ինն իր հերթին կօգնի, որ հետագայում երեխաները դպրոցում հաճույքով սովորեն: